



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 5 ՄԱՅԻՍ, 2014

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՐՄՈՍ 119

ՎՍՏԱՀՈՒԹԻԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՕՐԷՆՔԻՆ

Ինձի հանդէպ ցուցարբերէ՛ քու սէրդ, Տէր,
եւ ցոյց տուր քու փրկութիւնդ, ինչպէս ինքդ խոստացար.
որպէսզի ես պատասխան տամ անոնց՝ որ զիս կը նախատեն.
որովհետեւ ես քու խօսքիդ վստահեցայ:
Թոյլ մի՛ տար որ մշմարտութիւնը խօսելէ դադրիմ,
որովհետեւ քու արդար դատաստաններուդ վրայ իմ յոյսս դրի:
Պիտի գործադրեմ Օրէնքդ միշտ,
անդադար եւ մինչեւ վերջ:
Ազատութեամբ պիտի ընթանամ,
որովհետեւ հրահանգներուդ կը հնազանդիմ:
Թագաւորներու ներկայութեան իսկ
պատուիրաններուդ մասին պիտի խօսիմ, առանց քաշուելու:
Հանոյ՛ կ'առնեմ պատուէրներէդ,
որոնք այնքան կը սիրեմ:
Փառք կու տամ պատուէրներուդ համար, որ կը սիրեմ,
եւ միշտ կը խորհիմ քու կանոններուդ մասին:

ՆԱՐԱԿԱՆ - ԱՂՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէրոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղերոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,
Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի քու եւ ի գիշերի,
ի նստիլ ի քան, ի գնալ ի ճանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

ՅՈՎԱԷՓ ՓԱՐԱԲՈՆԻՆ ԵՐԱԶԸ ԿԸ ՄԵԿՆԷ (41:1-36)

Յաճախ երբ դժուարություններն ու նեղությունները պատեն մեզ, կը մատնուինք այնպիսի վիճակի մը, որ կարծէք այլեւս ելք չունինք, բայց եթէ երբեք Աստուծոյ վարահող ենք, այն արեն պիտի գիտնանք թէ այդ բոլորին մէջ Աստուծոյ մարը կայ, ինքն է փնտրինողը: Յաճախ մեզի համար այդ պարահարները ժխտական, բացասական կը թուին, եւ նոյնիսկ դժուար կ'ըլլայ մեզի համար քանակել, թէ այդ բոլորին մէջ Աստուած ծրագիր մը ունի: Ահա այդպիսին էր եւ եղաւ Յովսէփի կեանքը: Անոր ունեցած դժուարություններն ու նեղությունները զինք առաջնորդեցին մինչեւ Եգիպտոսի կառավարիչի գահին բազմելու:

«**Լման երկու փարի յետոյ**» (41:1): Տեսէք, թէ ինչպէս փարիներ կրնան փետել, բայց Աստուծոյ ժամանակները փարբեր են մեր ժամանակներէն:

«**Ոչ թէ ես, այլ Աստուած ինք Փարաւոնին պիտի փայ նպաստաւոր պատասխան մը**» (41:16): Յովսէփի շար յարակ ու անվախ վկայութիւնն մըն է որ կու փայ ըսելով, թէ ինչ որ պիտի ըսեմ ես չեմ այլ Աստուած ինք է: Այնպէս ինչպէս նախկին երագներուն բացատրութիւնը եւս ոչ թէ ինքն իրեն կը վերագրէ այլ Աստուծոյ: Յովսէփի ասով ցոյց կ'ուզէ փայ թէ այդ շնորհքը իր չէ այլ Աստուած է որ իրեն փուած է:

Միւս կողմէ, հեղափոխական է նաեւ Աստուծոյ գործելակերպը: Մարդկային բոլոր կարելիութիւններ օգտագործելէ յետոյ, հիմա Աստուած կը միջամտէ Փարաւոնին կեանքին մէջ: Փարաւոնին իր երագին բացատրութիւն մը ունենալու համար դիմեց իր քուրմերուն, մոգերուն եւ իմաստուններուն, բայց մէկը չեղաւ որ կարենար բացատրութիւն մը փայ: Ահա այս միջոցին է որ Տէրը պիտի օգտագործէ Յովսէփին, որպէսզի անիկա փայ բացատրութիւնը Փարաւոնին երագին:

Միւս կողմէ, Յովսէփի համբերութեամբ կը սպասէր Աստուծոյ, որովհետեւ գիտէր թէ օր մը Տէրը ինք պիտի միջամտէ եւ զինք ազարագրէ: Այնպէս ինչպէս Պօղոս Առաքեալ կ'ըսէ. «Տակաւին կը պարծենանք մեր նեղութեանց մէջ, զիտնալով որ նեղությունները մեզի համբերութիւն կու փան, համբերութիւնը՝ փոկունութիւն, փոկունութիւնը՝ յոյս, իսկ յոյսը երբեք ամօթով չի ձգեր, որովհետեւ Աստուծոյ սէրը քեզ գրած է մեր սիրտերուն մէջ՝ մեզի փրուած Սուրբ Հոգիին միջոցաւ» (Հռոմ 5:3-5):

Ահա այս բոլորին մէջ, Յովսէփի երբեք արելութեամբ չի լեցուիր, այն մարդոց նկատմամբ որոնք զինք ամբաստանեցին, ինչպէս էր պարագան Պետրոսի կնոջ, եւ կամ զինքը մոռցան, ինչպէս որ էր պարագան մարտակապետին, որ զինքը մոռցաւ երկու փարի, հակառակ անոր որ խոստացած էր հազիւ բանտէն ելէր բարեխօսէր Փարաւոնին մօտ Յովսէփի համար: Այս բոլորը, որովհետեւ Յովսէփի այս բոլորի մէջ քեզած էր Աստուծոյ մարը, միջամտութիւնը, ու մանաւանդ Անոր պարաստած ծրագիրը, որ փրկութեան ծրագիրն էր, ոչ միայն իրեն, կամ իր հօր եւ եղբայրներուն, այլ ամբողջ ժողովուրդի մը փրկութիւնը: